Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2017թ. հոկտեմբերի 12-ի թիվ 1 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝
Ա. Հ. Սիմոնյան

Կ Ա Ր Գ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԻՑ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Երևանի պետական համալսարանում (այսուհետ՝ ԵՊՀ) ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումների (այսուհետ՝ հարցում) կազմակերպման սույն կարգը սահմանում է ԵՊՀ շրջանավարտներին համալսարանում մատուցված կրթական ծառայությունների որակի գնահատման կարգն ու պայմանները:

1.2. ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումը ԵՊՀ որակի ապահովման ներքին համակարգի կարևորագույն բաղադրիչներից է, որն իրականացվում է առցանց եղանակով:

1.3. Սույն կարգը հաստատվում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարվում են ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ:

2. ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Հարցմանը մասնակցում են ԵՊՀ բակալավրիատի ու մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգի բոլոր շրջանավարտները: Հարցումն անցկացվում է յուրաքանչյուր տարվա փետրվար, հունիս, հուլիս ամիսներին:

2.2. Հարցման գործընթացը կազմակերպում և վերահսկում են ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը և ֆակուլտետները:

2.3. Հարցմանը շրջանավարտի մասնակցությունը պարտադիր է, որն իրականացնում է առցանց՝ շրջանավարտի համալսարանական էլեկտրոնային փոստի միջոցով:

2.4. Շրջանավարտին ԵՊՀ դիպլոմի հավելված տրամադրվում է միայն հարցմանը մասնակցելուց հետո:

2.5. Հարցումն անցկացվում է սույն կարգին կից ներկայացված գնահատման հարցաթերթով (Հավելված 1), որում առաջադրված հարցերին շրջանավարտը պատասխանում է գնահատման 0-5 միավորանոց սանդղակով: Հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների բաժնում, շրջանավարտը կարող է ներկայացնել նաև ԵՊՀ կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված առաջարկներ:

2.6. Հարցմանը մասնակցած շրջանավարտների անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է, իսկ հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ ձևաչափով:

3. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

3.1. Հարցման արդյունքները մշակվում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

3.2. Հարցման արդյունքների վերլուծությունն արտացոլվում է տարեկան զեկույցում, որը պարունակում է եզրակացություններ ԵՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ և ԵՊՀ ստորաբաժանումներին ուղղված առաջարկներ՝ կոնկրետ ուղղությամբ իրենց գործունեության բարելավման վերաբերյալ: Տարեկան զեկույցում ներկայացված առաջարկները մեկամսյա ժամկետում քննարկվում են ֆակուլտետների գիտական խորհուրդներում և ԵՊՀ գիտական խորհրդում:

3.3. ԵՊՀ այն ստորաբաժանումները, որոնց գործունեության վերաբերյալ հարցման արդյունքում բացահայտվել են թերություններ, տարեկան զեկույցի հրապարակումից հետո երեք ամսվա ընթացքում ԵՊՀ ռեկտորին պետք է ներկայացնեն իրենց ստորաբաժանման աշխատանքի բարելավմանն ուղղված գործողությունների ծրագիր, որը ենթակա է պարտադիր կատարման:

3.4. Աշխատանքի բարելավման գործողությունների ծրագրի արդյունավետ և նպատակային իրականացման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնը: